

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հարց 1. արդյոք այս ծրագրի ֆինանսական հետևանքները անմիջապես շուկայի մասնակիցները չեն «վերցնելու» իրենց վրա

Պատասխան. Տեղեկացնում ենք, որ ՀԴՄ-ների տեղադրումը և ցանցի անցկացումը պետք է իրականացվի շուկաների, առևտրի կազմակերպման վայրի տերերի հաշվին և որևէ ֆինանսական ծախս չպետք է առաջացնի առևտուր իրականացնողների համար: Այսինքն առևտուր իրականացնողները որևէ գումար չպետք է ծախսեն ոչ հղմ սարք գնելու, ոչ էլ ցանց անցկացնելու համար:

Հարց 2. Իսկ արդյոք ՀԴՄ-ների տեղադրելուն չեն հետևելու հարկայինի ստուգումները, քանի որ գաղտնիք չէ, որ շուկայի կազմակերպիչներին վճար վճարելով ներկայումս առևտրականները հիմնականում չէին առնչվում հարկայինի հետ?

Պատասխան. Առկա է ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 2008թվականի օգոստոսի 8-ի հրամանը, ըստ որի տոնավաճառներում, շուկաներում, առևտրի կազմակերպման այլ վայրերում ՀԴՄ տեղադրած անձանց մոտ հարկային ծառայությունը ձեռնպահ է մնալու հարկային հաշվառումների գծով ստուգումների իրականացումից մինչև տարեվերջ: ՀՀ կառավարությունը հավանություն է տվել և ներկայացրել է ԱԺ օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը պարունակում է բազմաթիվ «մեղմացումներ», հաշվառումը հեշտացնող դրույթներ փոքր և միջին ձեռներեցության համար: ՀՀ կառավարությունը փաստորեն խնդրում է ԱԺ պատգամավորներին, նույնիսկ իրենց արձակուրդը ընդհատելու պայմանով, հավաքվել և օգոստոսի 19-ին քննարկել վերը նշված օրենսդրական փոփոխությունների փաթեթը:

Հարց 3. Արդյոք ՀԴՄ տեղադրելը և ցանցով միացնելը նշանակում է ամեն օր հարկի վճարում:

Պատասխան. Ոչ, դա ներկայումս դրվող պահանջ չէ: Դա հետագայում լուծվելիք խնդիրների շարքին է պատկանում, որն ուղղված է լինելու հարկ վճարելու գործընթացի հեշտացմանը և ժամանակի խնայողությանը: Դա ենթադրում է հարկերը վճարելու սահուն մեխանիզմ, որը կներդրվի միայն հարկատուների համաձայնության և համապատասխան տեխնիկական լուծումների պարագայում:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք և խնդրում, որ անհանգստացնող փաստերի պարագայում զանգահարեք «թեժ գծի» հեռախոսահամարներով.

ՀՀ կառավարություն - 527 000

Հարկային ծառայություն - 59 46 47

Ձեզ հետաքրքրող հարցերի պատասխանը կարող եք ստանալ նաև www.taxservice.am կայքից:

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

11 օգոստոսի 2008թ.